ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
05.02.2025Թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ «ՀԾ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25» 03 2025թ.

ք.Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և 05.02.2025թ. կնքված N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/5 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1. Ավելացնել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների ծավալը 214,650 ՀՀ դրամի չափով, մասնավորապես՝ ծրագիրը վերազինել ևս մեկ հաշվեկշռով:

1.2. Պայմանագրի 4.1 կետի «3,762,000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «3,976,650 (երեք միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ» բառերով:

1.3. Սահմանել, որ Պայմանագրի № 1 հավելվածով նշված ծառայությունների մատուցման սկիզբ է հանդիսանում 2025թ. ապրիլի 1-ը:

1.4. Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված ֆինանսական պարտավորությունների կատարման փոփոխված ժամանակացույցը /կցվում է/:

2. Այլ պայմաններ

2.1. 05.02.2025թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/5» ծածկագրով պետության կարիքների համար «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի սպասարկման ծառայության ձեռքբերման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 00807555
Հ/Հ 900011018539	Հ/Հ 1930030005130100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Կոնվերս Բանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի	Տնօրեն
պարտականությունները կատարող	
_____ Ա. Եսայան	_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
05.02.2025թ. կնքված «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/5» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«25» 03 2025թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայությունների														
Հ/	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	72211174/1	Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ		752,400	752,400	1,764,450	1,764,450	1,764,450	2,775,500	2,775,500	2,775,500	3,976,650	3,976,650	3,976,650

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

---------- Ա. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ 00807555
Հ/Հ 1930030005130100
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Տնօրեն

---------- Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.